ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 08/19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 10 հոկտեմբերի 2019թ.

2019 թվականի հոկտեմբերի 10-ին, ժամը 12:00-ին, Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում՝ Բյուրեղավանի համայնքապետարանի թիվ 1 վարչական շենքում, տեղի ունեցավ համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման նպատակով ստեղծված ֆինանսական, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական գործող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստ՝ «Բյուրեղավան համայնքի 2019 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին» որոշման նախագծի թեմայով:

Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի նախագահ Արման Օհանյանը, անդամներ Արման Խանզադյանը, Արտյոմ Ավագյանը, համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանը, Հանձնաժողովի աշխատանքներին աջակցող, համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Զարուհի Ապրեսյանը:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց նիստի օրակարգը՝

1. Բյուրեղավան համայնքի 2019 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին:

համայքնի ավագանու որոշման նախագծի քննարկում:

Լ.Պողոսյանը ներկայացրեց Բյուրեղավան համայնքի 2019 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման ընթացքը: Գույքահարկի գծով վճարումներ կատարվել են 142.0%-ով, հողի հարկի գծով՝ 145.1%-ով, տեղական տուրքերը՝ 107.1 % -ով: Հողերի վարձակալությունից վճարները հավաքագրվել են 79.3 %-ով: Տեղական վճարները կատարվել են 220.00 % -ով, իսկ աղբահանությունը՝ 88.9%-ով: Գյուղական բնակավայրերում աղբահանության վճարների հավաքագրումը շարունակում է խնդրահարույց մնալ:
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը կատարվել են՝ շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման գծով՝ 33.4 % , տրանսպորտային սարքավորումների գծով՝ 24.3 %, վարչական սարքավորումների գծով ՝ 43.8%, այլ մեքենաներ և սարքավորումներ՝ 45.4%, աճեցվող կենդանիների գծով՝ 77.0 %, նախագծահետազոտական ծախսեր՝ 44.9 % :
Կից ներկայացվում է հաշվետվությունը:

Որոշվեց՝
հավանություն տալ Բյուրեղավան համայնքի 2019 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Նիստն ավարտվեց:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Արման Օհանյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Արման Խանզադյան

_____ Արտյոմ Ավագյան

Բյուրեղավան համայնքի բյուջեի 2019թ. եկամուտների և ծախսերի
կատարողականը առ 01.10.2019թ. դրությամբ

N	Եկամուտի անվանումը	2019 թվականի ինն ամիս			
		պլան	փաստ	կատ. %	շեղում
1	Եկամուտները, այդ թվում	218200.8	222884.9	102.1	4684.1
2	Հարկեր և տուրքեր , այդ թվում	20833.4	29002.4	139.2	8169.0
3	Գույքային հարկեր, այդ թվում	19153.4	27203.2	142.0	8049.8
4	Գույքահարկ շենքերի և շինությունների, փոխ.միջոցների համար	16653.4	23575.2	141.6	6921.8
5	Հողի հարկ	2500.0	3628.0	145.1	1128.0
6	Տեղական տուրքեր	1680.0	1799.2	107.1	119.2
16	Դոտացիա	157561.2	157561.2	100.0	0.0
17	Սուբվենցիա	1712.2	1712.2	100.0	0.0
18	Այլ եկամուտներ, որից	38094.0	34609.1	90.9	-3484.9
19	Հողի վարձակալությունից վճար	5560.0	4409.9	79.3	-1150.1
20	Տեղական վճարներ	150.0	330.0	220.0	180.0
21	Մանկապարտեզի վճար	8640.0	7825.3	90.6	-814.7
22	Արվեստի դպրոցի վճար	5184.0	4745.9	91.5	-438.1
23	Աղբահանության վճար	14560.0	12948.9	88.9	-1611.1
24	Համայնքի վարչ. տարարծ. ինքն. կառ. շենք. և շինություն.՝օրինակ. համար վճար	3000.0	2434.1	81.1	-565.9
25	Օրենքով և իրավ.այլ ակտերով սահման. այլ եկամուտներ	800.0	1905.0	238.1	1105.0
26	Վարչական տուգանք	200.0	10.0	5.0	-190.0
27	Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր	18000.0	3058.7	17.0	-14941.3
28	Տարեսկզբի ազատ մնացորդ	41804.4	41804.4	100.0	0.0
29	Ընդամենը եկամուտներ	278005.2	267748.0	96.3	-10257.2
30	Սեփական եկամուտներ	58927.4	63611.5	107.9	4684.1
	Բ.Ոչ ֆինանս.ակտիվների գծով ծախսեր	105474.8	35539.7	33.7	-69935.1
31	*Շենքերի և շինությունների ձեռք բերում*	7000.0	0.0	0.0	-7000.0
32	*Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում*	67920.0	22701.0	33.4	-45219.0
33	*Տրանսպորտային սարքավորումներ*	6633.0	1614.8	24.3	-5018.2
34	*Վարչական սարքավորումներ*	7041.8	3083.9	43.8	-3957.9
35	*Այլ մեքենաներ և սարքավորումներ*	9250.0	4200.0	45.4	-5050.0
36	*Աճեցվող կենդանիներ*	3000.0	2310.0	77.0	-690.0
37	Գեոդեզիական քարտեզագրական ծախսեր	1000.0	0.0	0.0	-1000.0
38	*Նախագծահետազոտական ծախսեր*	3630.0	1630.0	44.9	-2000.0